Բացառիկ առաջարկ պատանիների համար, ովքեր ցանկանում են իրենց ուժերը փորձել ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ մեջ՝ «Ձեռներեցության խուզարկու» բիզնես ճամբար Սյունյաց զեղեցկուհի Գորիս քաղաքում: Սա պարզապես ամառային հերթական ճամբար չէ, այլ մի **CHALLENGE,** որի ընթացքում պատանիները կհիմնեն իսկական բիզնես և կվաստակեն իրական գումար:

Սիրելի՛ ծնողներ, GO Կենտրոնը առաջարկում է «Ձեռներեցության խուզարկու» / **ESI Business Camp (Entrepreneurship Investigator Camp)** ամառային ճամբարային ծրագիրը՝ արկածներով և անմոռանալի հուշերով լի՝ ձեր երեխաներին առաջարկելու 7 անմոռանալի օր ԱՌԱՑ ՀԵՌԱԽՈՍ, Անգլիախոս միջավայրում: Ճամբարի ուսումնական մոդուլի հիմքում Ձեռներեցության ուսումնասիրություն գործնական դասընթացն է՝ մշակված ԱՄՆ-ի Նեբրասկա-Լինկոլն համալսարանի շարունակական կրթության բաժնի կողմից (Extension is a Division of the Institute of Agriculture and Natural Resources at the University of Nebraska-Lincoln), որի նպատակն է.

✅ Բացահայտել պատանիների ուժեղ կողմերը,
✅ Խթանել նրանց ձեռնարկատիրական ջիղը,
✅ Տրամադրել տարրական տնտեսվարության հմտություններ՝իրենց բիզնես գաղափարները կյանքի կոչելու համար,
✅ Զարգացնել քննադատական մտածողությունը,
✅ Խթանել լուծումներ գտնելու կարողությունը
✅ Առաջարկել զվարճալի ամառային ժամանց

Ի՞նչ կսովորեն երեխաները «Ձեռներեցության խուզարկու» / **ESI Business** ճամբարում:

✅ Ձևավորել S.M.A.R.T. գաղափարներ՝ շուկայի կարիքներին համահունչ,
✅ Իրատեսորեն գնահատել գաղափարի ետևում առկա ռիսկերը և կայացնել որոշումներ,
✅ Հասկանալ իրենց բիզնեսի տեղը դինամիկ փոփոխվող աշխարհում,
✅ Ստեղծել իրենց ապրանքի հեղինակությունն ու այն դուրս բերել վաճառքի շուկա,
✅ Մարկետինգ,
✅ Ղեկավարել դրամական հոսքերի մասին,

Ճամբարային շաբաթը կավարտենք արտադրության վաճառք-ցուցահանդեսով, որի ընթացքում երեխաները կներկայացնեն և կվաճառեն իրենց բիզնես արտադրանքը Գորիս համայնքում: Նախորդ ESI ճամբարներին կարող եք ծանոթանալ մեր Ֆեյսբուքյան էջում՝ GO Կենտրոնը
Ճամբարին կարող են մասնակցել 10-14 տարեկան դեռահասները:
ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ՃԱՄԲԱՐԸ կտևի 7 օր:

Արժեքը Գորիսի մասնակիցների համար՝
7օրյա ճամբարի արժեքը 50 000 ՀՀԴ
Արժեքը ներառում է՝

- Մասնակցի բիզնեսի արտադրական ծախսերը
- 1 անգամյա սնունդ (ճաշ)

Գրանցվելու համար՝ ՀՂՈՒՄ
Ճամբարային շաբաթ՝ 01.07.26-08.07.26

Լրացուցիչ հարցերի դեպքում՝

Հեռ.՝ 098 01 25 51 / 09 81 25 51
Էլ.փոստ՝ gocenter.languages.skills@gmail.com
gayane.gocenter@gmail.com